նշանները իսպառ ջնջեցին նէ՝ անի չեմք գիտեր. ըստ որում յիշեալ թուին նորոգութեան ժամանակին՝ որմերուն առջին սեղաններ ուելցուցին իրենց սովորութեան համեմատ, որով և մեր հայկաշէն եկեղեցին՝ հռովմէաշէն դարձուցին...»։

Թ

Ս. ՓՐԿՉԻ ՎԱՆՔԸ

Աւետարանի պատմութեան համաձայն, Յուդայի առաջնորդութեամբ քահանայապետաներու և ժողովրդեան ծերերու մարդերը սուրերով և բիրերով Յիսուսը Գեթսեմանիի մէջ կը բռնեն ու կապելով կը տանին՝ նախ Աննայի՝ և յետոյ Կայիափա քահանայապետին տունը, ուր, յետ հարցաքննութեան, ամբոխը կը պոռայ ըսելով թէ «մահապարտ է» ու ոմանք կ'սկսին Յիսուսի երեսը թքնել, կռփել և ուրիշներ ալ կ'ապտակեն. այդ պահուն Պետրոսը գաւթին դուրսը նստած կը տաքնար. ան՝ աղախինի մը հարցման վրայ՝ երեք անգամ կ'ուրանայ Յիսուսը. յետոյ Պետրոս յիշելով իր Վարդապետին խօսքը՝ դուրս կ'ելնէ և դառնապէս կ'սկսի լալ (Տե՛ս Մատթ. ԻԶ. 57–75, Մարկ. ԺԴ. 53–72, Ղուկ. ԻԲ. 54–62, Յովհ. ԺԸ. 12–27)։

Յիսուսի այս տնօրինական գործերուն ի յիշատակ՝ Կայիափայի տան տեղւոյն վրայ քրիստոնեայք՝ Զ. դարուն, կառուցած են սրբավայր մը, իբր կեդրոն ուխտագնացութեան. և նոյն սրբավայրը մինչեւ հիմակ գոյութիւն ունի եւ սեպհականութիւնը կը վերաբերի Հայոց և այժմ ան կը կոչուի Ս. Փրկչավանք։

Պիտի գրենք նախ Ս. Փրկչավանքին պատմութիւնը և վիճակայութիւնները և յետոյ պիտի յիշենք Ի. դարէն սկսեալ Աւագ Հինգշաբթիի գիշերուան թափօրը Ս. Փրկչի եկեղեցիին մէջ. եւ ապա ի ձեռին ունեցած մեր յիշատակարաններու համաձայն, պիտի ծանօթագրենք նոյն վանքին մէջ տեղի ունեցած դէպքերը։